ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՀ պետական եկամուտների կոմիտեի 2021 թվականի հունվար ամսվա գործունեության վերաբերյալ

<u>Ընթացիկ աշխատանքներ</u>

Նախնական տվյալներով 2021 թվականի հունվար ամսվա ընթացքում ԱՀ պետական բյուջե մուտքագրված հարկային եկամուտները և տուրքերը կազմել են 1027.2 մլն դրամ՝ նախորդ տարվա նույն ցուցանիշից պակաս 65.8 տոկոսով կամ 1972.3 մլն դրամով:

Հաշվետու ամսվա ընթացքում հարկային մարմնում գրանցվել (հաշվառվել) է թվով 60, լուծարվել՝ 5 տնտեսավարող սուբյեկտ:

Նույն ժամանակահատվածում կատարվել են թվով 27 ուսումնասիրություններ, այդ թվում՝ 21-ը՝ հսկիչ-դրամարկղային մեքենաների ներդրման անհրաժեշտության, 6-ը՝ ակցիզային դրոշմանիշների շարժի և դրոշմավորման կանոնների պահպանման:

Հարկ վճարողներին սպասարկող ստորաբաժանումների կողմից ընդունվել և մշակվել է 6,819 հաշվարկ-հաշվետվություն, որից էլեկտրոնային եղանակով՝ 6,460:

Էլեկտրոնային եղանակով հաշվետվությունների ներկայացման նպատակով հարկ վճարողների հետ կնքվել են թվով 29 պայմանագրեր:

Հիպոտեկային վարկի սպասարկման համար վճարված տոկոսների գումարների չափով վարձու աշխատողների և անհատ ձեռնարկատերերի կողմից վճարված եկամտային հարկի գումարների վերադարձի գործընթացի շրջանակներում հունվար ամսում կատարվել է վերադարձ 28 վարձու աշխատողի՝ 3,9 մլն դրամի չափով:

Եռամսյա ժամկետով հարկային արտոնություններից օգտվելու նպատակով գործունեությունը նոր սկսող 10 հարկ վճարողների տրամադրվել են հավաստագրեր:

Լրամշակվել և Ազգային ժողովի քննարկմանն են ներկայացվել հարկային մի շարք օրենքներում փոփոխություններ նախատեսող օրենքների նախագծերի փաթեթը:

Հաշվետու ամսում ՊԵԿ նախագահի հրամանով հաստատվել է «Արցախի Հանրապետությունում արտադրվող ակցիզային հարկով հարկման ենթակա ծխախոտի արտադրանքի դրոշմավորման համար «2021» թվագրմամբ ակցիզային դրոշմանիշի նմուշը», որը ԱՀ կառավարության որոշմամբ 2021 թվականի հունվարի 15-ից դրվել է կիրառության մեջ, փոփոխություն կատարվել «Հարկային մարմնի կողմից հավաքագրվող

հարկատեսակների և այլ պարտադիր վճարների հաշվետվությունների էլեկտրոնային ներկայացման համակարգի ներդրման» ժամանակացույցում:

Ուսումնասիրվել են պետական կառավարման այլ մարմինների կողմից ներկայացված իրավական ակտերի նախագծերը:

Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության հարկային մարմինների համագործակցության ծրագրի շրջանակներում երկու կառույցների միջև իրականացվել են ԱՀ հարկ վճարողների կողմից ՀՀ մաքսային սահմանով կատարված ներմուծումների, արտահանումների, ՀՀ և ԱՀ սուբյեկտների միջև իրականացված գործարքների, անուղղակի հարկերի հաշվանցումների, ինչպես նաև հարկման հիմք հանդիսացող այլ փաստաթղթերի ու տեղեկությունների փոխանակման աշխատանքներ:

<u>Հասարակայնության հետ կապ</u>

Հարկային մարմնի պաշտոնական ինտերնետային կայքի միջոցով շարունակվել են հանրային իրազեկման աշխատանքները:

Հունվար ամսվա ընթացքում հարկային մարմին է մուտքագրվել 223, ելքագրվել՝ 61 նամակ-գրություն, որոնք ընթացքավորվել են ըստ գործող կարգի, այդ թվում՝ հարկային օրենսդրության դրույթների պարզաբանման նպատակով ներկայացվել է 6 գրություն, որից 2-ը՝ էլեկտրոնային եղանակով: